ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2025Թ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 5 990 959 003 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4 159 164 559 դրամ, կամ ինն ամսվա մուտքերի առաջադրանքը կատարվել է 69,4 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 2 268 678 000 դրամի դիմաց կատարվել է 1 348 625 801 դրամ կամ կատարվել է 59,4 %-ով՝ :

1. Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 723 976 ,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 968 414, 6 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 56,2 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 57,0 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 43,6 %-ով, տեղական տուրքերը՝ 124,0 %-ով, պետական տուրքերը՝ 98,4 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 171 606,65 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 212 793, 3 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 21 000,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 20 664, 6 հազար դրամ:

2. Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 2 737 555, 3 հազար դրամ:

3. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 617 213, 9 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 453 194, 6 հազար դրամ, կամ կատարվել է 73,4 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 53,9 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 110,9 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը 3 998,0 հազար դրամի դիմաց կազմել են 2 798, 6 հազար դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 422 212,5 հազար դրամի դիմաց գանձումները կազմել է 300 609, 9 հազար դրամ կամ կատարվել է 71,2 %, որից աղբահանության վճարների մասով 201 442,0 հազար դրամի դիմաց գանձվել է 158 297,3 հազար դրամ կամ կատարվել է 78,6 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 60,6 %-ով:

Ծախսեր

2025 թ. համայնքի բյուջեի վարչական մասի ինն ամսվա ծախսերը կատարվել են 47,4 %-ով՝ 5 990 959,0 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 2 840 438,4 հազար դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 52,3 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 72,1 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 71,3 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 72,0 %-ով:

ե/Առողջապահության համար նախատեսված ծախսերը կատարվել են 15,0 %-ով:

զ/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 68,3 %-ով:

է/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 63,4 %-ով:

ը/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսեր առայժմ չեն իրականացվել՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով :

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 790 059,391 հազար դրամի դիմաց կատարվել է 2 559 561,891 հազար դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 595 349,969 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 539 231,6 հազար դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 206 011,8 հազար դրամ, կապիտալ սուբվենցիայի տարեսկզբի մնացորդ՝ 218 968,522 հազար դրամ:

2025 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 691 005,5 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման և կառուցման, համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և հիմնանորոգման, համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, համայնքային այգիների բարեկարգման համար ծախսերը կազմել են 607 131,9 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 73 629,9 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 10 243,7 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ